2023 թ.

«Ակտիվ ուսուցման և դասավանդման մեթոդները. ձևավորող գնահատման մոտեցումներն ու գործիքակազմը» թեմայով վերապատրաստման եռօրյա դասընթացի արդյունավետության գնահատում

Որակի ապահովման բաժին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 4
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 8

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Որակի ապահովան բաժինը (այսուհետ՝ ՈԱԲ), կարևորելով բուհի կրթական ներուժի զարգացումն ու պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմի մասնագիտական կարողությունների աճը, պարբերաբար անցկացնելով ներքին շահակիցների շրջանում հարցումներ և արձագանքելով ՊԴ կազմի կարիքներին, իրականացրել է թիրախային վերապատրաստում:

Նշենք, ՈԱԲ–ը 2021–2022 ուսումնական տարում իրականացրել է դասընթացների նկարագրերի մշակման ներբուհական փորձի մշտադիտարկում, որի արդյունքում պարզ է դարձել, որ դասընթացի նկարագրերում պահպանված չէ կրթական վերջնարդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների կապը ակնկալվող կրթական վերջնարդյունքների հետ: Բացի դրանից՝ նախատեսված հանձնարարականներն ու առաջադրանքները, սահմանված գնահատման մեթոդները կապակցված չեն ակնկալվող կրթական վերջնարդյունքներին:

Այս հետազոտության արդյունքում վերհանված խնդիրներին լուծում տալու համար ՈԱԲ–ը կազմել է դասընթացի նկարագրերի մշակման ուղեցույց և առաջարկել է, որ ամբիոններում փուլայնությամբ՝ նորամշակ կամ լրամշակվող դասընթացների նկարագրերում բացառվեն առկա խնդիրները, դասախոսները լսարանում փորձեն հետազոտել ու գնահատել իրենց դասընթացների դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համահնչեցումը: Սակայն ՈԱԲ մշտադիտարկումը, պարբերաբար իրականացվող հարցումները, ՈԱԲ աուդիտի արդյունքները փաստում են, որ ՊԴ կազմի կողմն ունի աջակցման կարիք դասավանդման ժամանակակից մեթոդների, վերջնարդյունքահեն գնահատման մոտեցումների, ռուբրիկային գնահատման չափանիշների և չափորոշիչների սահմանման հարցերում:

Վերը նշված խնդիրների և խոչընդոտների հաղթահարման նպատակով 2022-2023 ուստարվա վերապատրաստումների ծրագրի շրջանակում ՄՌԿԸ բաժնի համակարգմամբ ՈԱԲ–ն անցկացրել է «Ակտիվ ուսուցման և դասավանդման մեթոդները. ձևավորող գնահատման մոտեցումներն ու գործիքակազմը» թեմայով եռօրյա վերապատրաստման դասընթաց: Դասընթացից հետո բաժինն իրականացրել է հարցում՝ պարզելու ՀՖԿՍՊԻ պրոֆեսորադասախոսական կազմի գոհունակությունը վերապատրաստման վերաբերյալ:

Հարցման նպատակը

Սույն հարցման նպատակն է պարզել ՈԱԲ–ի կողմից ՊԴ կազմի գնահատված կարիքի հիման վրա կազմակերպված վերապատրաստման արդյունավետությունը,

հավաքագրել մասնակիցների կարծիքներն ու առաջարկները՝ նախանշելով հետագա վերապատրաստումների ոլորտները:

Հարցման մեթոդաբանությունը

Վերապատրաստմանը ներգրավվել են ընդհանուր 14 դասախոս (բոլոր ամբիոններից), որից 13–ը փաստացի մասնակցել է եռօրյա դասընթացներին:

Հարցումն իրականացվել է թղթային տարբերակով, մասնակցել է 12 հոգի՝ վերապատրաստման մասնակիցների 92%–ը:

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի արդյունավետության գնահատում



Գծապատկեր 1

Նկատենք, որ վերապատրաստվող ՊԴ կազմի մեծամասնությունը (67%-ից ավելին) փաստում է, որ *«Ակտիվ ուսուցման և դասավանդման մեթոդները. ձևավորող գնահատման մոտեցումներն ու գործիքակազմը»* վերապատրաստման դասընթացը արդարացրել է ակնկալիքները (92%), ներկայացված նյութը կիրառելի է գործունեության համատեքստում (67%), բովանդակությունը համապատասխանել է դասընթացի վերնագրին ու խնդիրներին (100%) և արդյունքում ձեռք են բերվել նոր հմտություններ (67%) (տե՛ս Գծապատկեր 1):



Գծապատկեր 2

Հարցման արդյունքում պարզ է դառնում, որ հարցման բոլոր մասնակիցները տվյալ դասընթացի անցկացման ձևաչափը համարում են արդյունավետ և հաջորդիվ կրկին մասնակցելու ցանկություն են հայտնում: Նրանք բոլորն են խորհուրդ կտան իրենց գործընկերներին մասնակցել նմանօրինակ վերապատրաստումների (տե՛ս Գծապատկեր 2):

Վերապատրաստման ուժեղ կողմերը.

- Թեման շատ արդիական էր, շատ ինֆորմատիվ և կիրառելի:
- Նյութի մատչելի ներկայացում, պարզ, հասկանալի և հեշտ ընկալվող:
- Գրագետ խոսք, օրինակելի մատուցում:
- Նպատակային, հիմնավորված և համակողմանի վերլուծության հիման վրա կազմված դասախոսություն:
- Նոր մեթոդների և տարբեր գործիքակազմերի մասին տեղեկատվություն և այդ ծրագրերի կիրառման ուսուցում:
- Զուգահեռ ներկայացված մյուս առարկաների օրինակներով կարելի էր տեղում կատարելագործել և խմբագրել սեփական դասընթացի նկարագրում սահմանված վերջնարդյունքները, առաջադրանքները և գնահատման մեթոդները:
- Կատարվել է հսկայական աշխատանք, դասընթացավարը լիարժեք տիրապետում էր թեմային, հրաշալի ներկայացում, դասընթացը ծառայեց իր նպատակին:
- Հետաքրքիր և արդյունավետ քննարկումներ, անմիջական քննարկումներ, թիրախային խնդիրների լուծման առաջարկություններ:
- Ուսուցման գործընթացի և վերջնարդյունքների գնահատում, ուսուցման գործընթացում ժամանակակից մեթոդների և միջոցների կիրառում:

Վերապատրաստման թույլ կողմեր

- Ժամանակի ոչ ճիշտ կառավարում:
- Ներկայացված նյութը բավականին հագեցած և բովանդակալից էր: Դասավանդման մեթոդների, և ուսանողների գնահատումը ներկայացված են օրինակելի հաճախումների 70-80% լսարանի համար:
- Մասնակիցների քիչ քանակ:

Համադրելով «Ակտիվ ուսուցման և դասավանդման մեթոդները. ձևավորող գնահատման մոտեցումներն ու գործիքակազմը» դասընթացի ուժեղ և թույլ կողմերը՝ նկատենք, որ վերապատրաստվողների համար մատուցված նյութը օգտակար, գոհացուցիչ և կիրառելի էր, սակայն դասընթացը՝ ըստ նրանց ուներ հագեցած բովանդակություն և ժամանակը չէր բավարարում տեղեկատվությունը լիովին յուրացնելու համար:

Հարցվածները կարևորում են նաև այլ դասախոսների ներգրավվածությունը տվյալ դասընթացին:

Վերապատրաստման դասընթացի արդյունքում ձեռք բերված կարևոր գիտելիքներ և հմտություններ

Հարցման մասնակիցները նշում են, որ սույն վերապատրաստումն օգնեց իրենց ավելի լավ հասկանալ՝ ինչպես սահմանել դասավանդման մեթոդների, հանձնարարականների/առաջադրանքների և գնահատման մեթոդների կապը վերջնարդյուքների հետ: Որոշ դասախոսների համար ավելի հասկանալի դարձան ռուբրիկային գնահատման սկզբունքները: ՊԴ կազմի մի մասը վերապատրաստման ընթացքում «Kahoot» և «Chat GPT» առցանց գործիքների մասին ստացած գիտելիքները որոշեց կիրառել դասավանդման գործընթացում: Բացի այս ամենը՝ մասնակից դասախոսները նկատեցին սեփական դասընթացների նկարագրերում փոփոխություններ անելու անհրաժեշտությունը:

- Հստակեցվեցին ռուբրիկների կազմման առանձնահատկությունները, ծանոթացանք ուսուցման և դասավանդման նոր մեթոդներին, գնահատման նոր մոտեցումներին, չափանիշներին ու չափորոշիչներին:
- Դասախոսության նոր ձևերի կիրառման ուսուցում, ուսանողների աշխատանքի և վերջնարդյուքների ճիշտ գնահատման մեթոդների ձևակերպում:
- Ձեռք բերեցի նոր գիտելիքներ, օրինակ կրթական գործընթացում «Kahoot» և «Chat GPT» առցանց գործիքների վերաբերյալ, որոնք կարող ենք կիրառել հետագա մեր գործունեության ընթացքում, որոնք ավելի կհեշտացնեն ու կնպաստեն տեղեկատվության շրջանակի ընդլայնմանը:
- Մեր կողմից կազմված դասընթացի նկարագրերում կա շտկողական աշխատանքների կարիք:
- Դասընթացի նկարագրի մշակման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, դասավանդման և գնահատման մեթոդների ճիշտ կիրառում:
- Վերապատրաստման ընթացքում ներկայացված օրինակները, կարող ենք դարձնել պրակտիկ փորձ:
- Ներկայացված գործիքակազմը կաշխատեմ կիրառել:

«Ակտիվ ուսուցման և դասավանդման մեթոդները. ձևավորող գնահատման մոտեցումներն ու գործիքակազմը» դասընթացի վերաբերյալ

Դիտարկումներ.

- Որակի բաժինը կատարել էր մեծածավալ համեմատական վերլուծություն:
- Արդյունավետ էին քննարկվող բոլոր մեթոդները, որոնց մի մասը ես օգտագործում եմ իմ պրակտիկայում: Վերջիններս կարող են բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը:
- Այն լիովին բավարարում է ուսուցման արդի պայմաններին և պահանջներին:

Առաջարկներ.

- Մարզիչ–մանկավարժ պատրաստելու և ՖԿ դասեր անցկացնելու համար ներկայացնել առավել նպատակահարմար և ժամանակակից մեթոդներ՝ ըստ պարապմունքների բնույթի:
- Հրաշալի և կարևոր նախաձեռնություն էր, ցանկալի է հաճախակի կազմակերպել նմանատիպ դասընթացներ:
- Ցանկալի է, որ նմանատիպ հանդիպումները լինեն շատ և ներգրավված լինեն մեծ թվով դասախոսներ:

ՈԱ բաժինը կրթական որակի բարելավման շարունակականությունը ապահավելու համար հավաքագրել է ՊԴ կազմին անհարժեշտ վերապատրաստման ոլորտներն ու ուղղությունները: Հարցմանը մասնակցած պրոֆեսորադասախոսական կազմի մեծամասնությունը ցանկություն է հայտնել հետագայում կրկին մասնակցել այս թեմայի շրջանակներում վերապատրաստման դասընթացների, սակայն նախընտրում է, որ այդ դասընթացները լինեն կարճ ժամկետներում և հաճախակի՝ ներառելով կոնկրետ մեկ թեմա: ՊԴ կազմը ցանկություն ունի նաև մասնակցել «ՄԿԾ–ների մշակման» վերաբերյալ դասընթացների, ինչպես նաև փորձի փոխանակման հանդիպումների:

- Ցանկալի կլինի կոնկրետ մեկ թեմայի կամ մեթոդի կիրառման վերաբերյալ կազմակերպվի հանդիպումների շարք, որտեղ կլինի դասախոսների ընդլայնված կազմ: Ժամանակի առումով ավելի կարճ բնույթի հանդիպումներ, հաճախ հանդիպումներ, որոնք պահանջում են կոնկրետ հարցերի վերջնական լուծումներ:
- Ցանկալի է մասնակցել ՄԿԾ–ներ մշակմանը վերաբերող վերապատրաստումների:
- Լսարանում ուսանողների ներկայությունն ու ներգրավվածությունը ակտիվացնելու համար մեթոդների քննարկում:

- Եթե հնարավոր է կազմակերպել վերապատրաստումներ՝ փորձի փոխանակման հանդիպումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ամփոփելով «Ակտիվ ուսուցման և դասավանդման մեթոդները. ձևավորող գնահատման մոտեցումներն ու գործիքակազմը» վերապատրաստման դասընթացի մասնակիցների հետ անցկացված հարցման արդյունքները՝ պարզ դարձավ, որ ՊԴ կազմի համար դասընթացը օգտակար էր, արդյունավետ և կիրառելի:

- «Ակտիվ ուսուցման և դասավանդման մեթոդները. ձևավորող գնահատման մոտեցումներն ու գործիքակազմը» վերապատրաստման դասընթացը մասնակիցների 100%-ի համար համապատասխանել է վերնագրին ու խնդիրներին, 92%-ի համար արդարացրել է ակնկալիքները, 67%–ի համար կիրառելի է գործունեության համատեքստում: Հարցման մասնակիցների 67%–ը ձեռք է բերել նոր հմտություններ:
- Հարցման արդյունքում պարզ է դառնում, որ հարցման բոլոր մասնակիցները տվյալ դասընթացի անցկացման ձևաչափը համարում են արդյունավետ և հաջորդիվ կրկին մասնակցելու ցանկություն են հայտնում: Նրանք խորհուրդ են տալիս իրենց գործընկեր դասախոսներին ևս մասնակցել նմանօրինակ վերապատրաստումների:
- Դասընթացի ուժեղ կողմ է դասընթացավարի մասնագիտական պատրաստվածությունը, թեմայի արդիականությունն ու արդյունավետությունը, ձեռք բերված գիտելիքների կիրառելիությունը, մատուցվող նյութի որակն ու կարևորությունը:
- Դասընթացի թույլ կողմ է դուրս բերվել վերապատրաստման նյութի հագեցվածություն ու դրա յուրացման համար ժամանակի պակասը:
- Վերապատրաստման մասնակիցները ձեռք են բերել կարևոր հմտություններ, որոնք թույլ կտան բարելավելու իրենց դասավանդման գործընթացը՝ կիրառելով տարբեր դասավանդման և գնահատման մեթոդներ:
- ՀՖԿՍՊԻ–ի ՊԴ կազմի մեծամասնությունը ցանկություն է հայտնել հետագայում մասնակցել ՈԱԲ–ի կողմից կազմակերպված կրթական գործընթացի, ՄԿԾ–ների մշակման վերաբերյալ դասընթացների:

Վերլուծելով ՊԴ կազմի դիտարկումներն ու առաջարկները՝ Որակի ապահովման բաժինը առաջնային է համարում հաճախ կազմակերպել ՊԴ կազմի դասավանդման գործընթացում կիրառված ակտիվ ուսուցման մեթոդների, ռուբրիկային գնահատման մոտեցումների վերաբերյալ հանդիպում–քննարկումներ, որտեղ դասախոսները կներկայացնեն իրենց կատարած բարելավումներն ու հաջողված փորձը, ինչպես նաև կխոսեն հուզող հարցերի և կարիքների մասին: Համադրելով ՈԱԲ վերջին շրջանի միջոցառումների արդյունքները՝ ՈԱԲ–ը կնախաձեռնի «Որակի օրեր» հանդիպումների շարք: